

ՄՇԱԿ

Տարեկան գինը 10 ռուբլի, կես տարվան 6 ռուբլ. Առանձին համարները 7 կոպեկով.

Թիֆլիսում գրվում են միմյան խմբագրատան մէջ.

Մեր հասցեն. Тифлисъ. Редакция «Мшакъ».

Կամ Tiflis. Rédaction «Mschak».

Տ է Լ Է Ք օ ն № 253.

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ (բացի կիրակի և տօն օրերէն).

Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով.

Յայտարարութիւնների համար վճարում են իւրաքանչիւր բառին 2 կոպեկ.

Տ է Լ Է Ք օ ն № 253.



ՀԻՄՆԱԳԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Ա. Վ. Ստեպանով. — Ներքին ՏԵՍՈՒԹԻՒՆ. Իման Ալեքսեյեւիչ Ջինովիեւ. Նամակ Գորու գաւառից. Ներքին լուրեր. — ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Վերջին տեղեկութիւններ. Պետութիւնները և Բ. Դուռը. Հասկանալի համակարգ. Նամակ Թիւրքիայից. Նամակ Պարսկաստանից. Արտաքին լուրեր. — ԽԱՌՆ ԼՈՐԻՆԻ. — ՀԵՌԱՎԻՐՆԵՐԻ. — ԲՈՐԱՍ. — ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐԻ. — ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ. Նամակ Անգլիայից.

Ա. Վ. ՍՏԵՊԱՆՈՎ

Երէկ, յուլիսի 9-ին, լրացաւ կողմասեան համակարգի հրապարակախօսներէ մէկի, երբեք հաւատարմատար Ա. Վ. Ստեպանովի մահական տաճարակարգ. Այդ առիթով հոգեհանգիստ կատարվեց Թիֆլիսի Վոզնեսենսկայա եկեղեցւում, ուր թաղված էր հանգուցեալը. հոգեհանգիստին ներկայ էին հանգուցեալի պաշտօնակիցները և տեղական մամուլի ներկայացուցիչները:

Այժմեան ժամանակ, երբ դիտելահետեան լապտերով պէտք է որոնել հասարակութեան շահերին անձնատուր, ազնիւ, անկողմնապահ և անաչառ մարդկանց, մենք մի առանձին յարգանքով պարտք ենք համարում յիշել հանգուցեալ Ստեպանովին, որը ոչ միայն իբրեւ փառաբան, այլ մանաւոր իբրեւ հրապարակախօս, իբրեւ հասարակական գործիչ թողել է անմոռանալի յիշատակ: Ի՞նչն էր հանգուցեալի անուան և գործին այդպիսի գեղեցիկ գոյն տալիս: Լայն գաղափարներ, մարդասիրութիւն, անկեղծ սէր դէպի մարդը, ինչ դասակարգի, ինչ ազգի և դաւանութեան էլ պատկանէր այդ մարդը. — հա Ստեպանովի գործունէութեան յատկանիշները: — Մի կողմ դնելով նրա իրաւաբանական գործունէութիւնը, որ նայելուս մեծ համակրութիւն էր վայելում Հանգուցեալ, հիմնելով Թիֆլիսում «Новое Обозрение» լրագրի, ցոյց տուց թէ ինչ պարտաւորութիւն ունի շիտակ, ազնիւ և արդարասէր

ուս հրապարակախօսը մեր երկրի նման մի տեղ, ուր բազմալեզու, այլալեզու ազգերի մի ահագին խառնուրդ, դուրս գալով մշտական պատերազմների, քաղաքական թշուառութիւնների երկար շրջանից, պիտի պատրաստվի ընդունելու խաղաղ քաղաքացիական, կուլտուրական մարզու կոչումը:

Հանգուցեալ Ստեպանով, իբրեւ այն ազգութեան ներկայացուցիչ, որ պարգեւել է կովկասին խաղաղ ապրելու և մտաւորապէս ու տնտեսապէս զարգանալու կարողութիւնը, ծառայում էր այդ բազմալեզու հասարակութիւններին իր բարի, արդար, ազնիւ խօսքով: Նա հասկանում էր, որ մեր երկրի զանազան տարրերի համերաշխ և միաբան գործակցութիւնից է կախած կովկասի բարօրութիւնը ու առաջադիմութիւնը: Եւ նա իրան յատուկ տաղանդով և տոկոսութեամբ պաշտպանում էր տեղական շահերը, լուսաբանում էր նրանց առաջադիմ գաղափարների տեսակետից, չէր նայած որ այդ ուղղութիւնը այնքան էլ հաճելի չէր ուս թիմու հայրենասէրներին, որոնք այն ժամանակներն էլ գոռուձգուձում ունէին և որոնք այժմ բազմաձայն են սուսկի արագութեամբ: Ատելով նեղ ազգայնական տեղեկեցիկները, երես դարձնելով այն մարդկանցից, որոնք ընդունակութիւնն էին չունենալ իր շուրջը զրոյսել, բայց փոխադարձ առեկտիւնեան քարոզներով ամեն տեղ տարածում են թշնամութիւն և աւերմունք, համակրելի հրապարակախօսը պնդում էր որ հիւրը. իբրեւ հարազատ ուս, իբրեւ ներկայացուցիչ այն ազգի, որ արեւել է թափել կովկասը նուաճելու համար, իր գործունէութեան հիմնաքար է ընդունում բուն ուս ժողովրդի ոգին, որին ատելի է ազգայնական նեղութեամբ: Եւ այդպէս այն, ինչ որ յետագային էր ներգայեցող հրապարակախօսները համարում էին սրբութիւն սրբոց, հանգուցեալ Ստեպանով ոչ միայն համարում էր վերստին ընդհանուր մարդկային շահերի

տեսակետից, այլ նոյն իսկ հակառակ այն ազգի ոգուն, որի անունից խօսում էին օտարակերները:

Այդպիսի հրապարակախօսներ այժմ, դժբաղդաբար, քիչ են և օրից օր քչանում են և նրանց քարոզութիւնը «մոռացված խօսքերի» տպաւորութիւն է թողնում: Բայց իրանք, այդ «մոռացված խօսքերի» հեղինակները չեն մոռացվում: Կանցնեն ժամանակներ, սե յիշատակներ մէջ կը կորչեն այնպիսի մարդիկ, որոնք գրեթէ դարձնում են բամբասանքների, ստոր ինսինուալ գիտելիքի և ազգերի մէջ եղբայրական զգացմունքի, փոխադարձ համակրանքի, սկզբունքները ոչնչացնելու գործիչ, և ապագայ սերունդը իրան շնորհապարտ կը համարէ այնպիսի գերեզմանների առաջ, որոնցից մէկը պահում է իր մէջ հանգուցեալ Ստեպանովին:

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԻՎԱՆ ԱԼԵԽԱՆԻՅԵ ՋԻՆՈՎԻԵՎ

Այսօրվայ հեռագիրը հաղորդում է Եվդիմիի ուսաց դեսպան Ջինովիեւի Կ. Պոլսի դեսպան նշանակվելու լուրը: Այդ առիթով մենք հարկաւոր ենք համարում մի քանի տեղեկութիւններ հաղորդել Կ. Պոլսի ուսաց նոր դեսպանի զիւլումաթիական գործունէութեան մասին:

Իվան Ալեքսեյեւիչ Ջինովիեւ ծնվել է 1835 թ. ին. ուրեմն նա 62 տարեկան է: Իր ուսումը ավարտելով, ինչպէս անցեալ անգամ ևս հաղորդեցինք, նա ծանօթ է հայոց և պարսից լեզուներին: Հնամարտ ավարտելուց յետոյ նա մտաւ հաղորդելու գործին միմիատրութեան մէջ ծառայելու, իսկ 1855 թ. նա ստացաւ արևելագիտութեան մագիստրոսի աստիճանը Պետերբուրգի համալսարանից: Իր զիւլումաթիական ասպարէզը նա սկսեց Պարսկաստանի Ռաշտ քաղաքում, ուր ուղարկվեց իբրեւ այդտեղի ուս-

տաց հիւպատոսարանի քարտուղար: Ռաշտից նա փոխադրվեց Թալիզ, և նշանակվեց ընդհանուր հիւպատոսարանի քարտուղար. ապա կարգվեց այդ հիւպատոսարանի կառավարիչ, իսկ 60-ական թվականներին նա նշանակվեց արդէն թէ հարանի ուսաց դեսպանատան կառավարիչ, իբրեւ առաջին քարտուղար, դեսպանի բացակայութեան պատճառով: Այդտեղ մնաց մինչև 1871 թ. իւր, երբ նշանակվեց Ռումինիայի թագաւորի մօտ զիւլումաթիական ազնետ, իսկ 1876 թ. ին, երբ Ռուսաստանը կամեցաւ աւելի ազդեցիկ դեր խաղալ Պարսկաստանում և Շահի հետ առեւտրական նոր դաշնագիր կապել և հարկ եղաւ փոխարինել այն ժամանակվայ դեսպան Բէկկէրին, որ մի թույլ և անգործունէայ մարդ էր, մի աւելի հմուտ, ճարպիկ և փորձված զիւլումաթի, արտաքին գործերի միմիատրութիւնը կանգ առաւ Ջինովիեւի վրա:

Նոր դեսպանը պէտք է ոչ միայն հաստատէր Պարսկաստանում ուսաց դերակառութիւնը, որ այդ ժամանակ պատկանում էր Անգլիային, պէտք է ոչ միայն աւետարական մի քանի առանձնաշնորհներին ձեռք բերել Ռուսաստանի համար, այլ և պէտք է զեկավարէր թէհրանից Անգլիկոսական արշաւանքը՝ գեներալ Սկոբելեւի առաջնորդութեամբ, և հասցնէր զօրքին պաշար Պարսկաստանից. բացի դրանից, Ջինովիեւ պէտք է աշխատէր նոր սահման գծել Պարսկաստանի և Անգլիկոսական երկրի մէջ և այնպիսի սահմանադրութիւն հաստատել, որ միջոց տար Ռուսաստանին խաղաղացնել աւազակ թիւրքերին: Ուր ուրու միտմաները ամենամեծ աւելութեամբ կատարեց Ջինովիեւ և իր ժամանակին ամենամեծ յարձակումներն ու գովասանքներն աւարկալ դարձաւ անդլիական մամուլի կողմից: Անգլիայի հասարակական կարծիքը վերագրելով Ռուսաստանի ազդուութիւնները Պարսկաստանում Ջինովիեւի զիւլումաթիական տաղանդին, սկսեց պահանջել, որ թէհրանի անգլիկոսական դեսպան Տոմասը յետ կանչվի և նրա տեղ մի աւելի հմուտ ու ճարպիկ զիւլում-

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՆԱՄԱԿ ԱՆԳԼԻՍՅԻՑ

Լ օ ն դ օ ն, յունիսի 28-ին

Հայերու բարեկամաց Միջազգային ընկերակցութեան հրատարակած վերջին թերթերէն մին կը կրէ «How To Help» վերնագիրը, որ կը նշանակէ թէ ինչպէս պէտք է օգնել հայերուն:

Այս թերթին կամ չըջաբերականին մէջ համառօտի բացատրված է թէ հայերու բարեկամներ ինչպէս կրնան օգնել հայերու, այսինքն թէ գաղթական և թէ Թուրքիոյ մէջ դեռ մնացած հայերու, որոնց մեծ մասը որքեւ և որքաւրիներ են անշուշտ: Երջաբերականին մէջ կը տեսնուի թէ երբեք գլխաւոր միջոցներ ցոյց տրուած են հայերուն օգնելու: Առաջին միջոցը հայերու դատը փոփոխելն էր, հայերու պատմութիւն, վիճակ, անցեալ և ներկայ իւրօրայից քաղաքակրթիւթ փոփոխութիւններն ծանօթացնել էր քանակաւորութիւններ ընկնով, գիրքեր հրատարակելով և ներկայացումներ տալով: Երկրորդ միջոցը՝ դրամ և զգեստ զրկելով կարօտ հայերուն: Անձնուրէր տիկիներ և պարսիկներ արդէն մասամբ ստանձնած են այդ գործը և Պէթլըր, Հէրիս, Կինես և Սըմըրսթի նման անձնաւորութիւններ մասնաւոր ուղղորդութիւն տուած են ժողովրդեան ըմբռնել տալու: Թէ հայերու մեծ մասին գոյութիւնը իրենց բնիկ երկրին մէջ պահելու ջանք ի գործ դրուելու է: Այս պատճառաւ անս որքանոցներու հաստատման և որքերու որդեգրութեան գաղափարը տարածել կաշխատած է Էրիս և Տարլին: Երրորդ միջոցը,

որ ցոյց տրուած է, է օգնել հայերուն իրենց ձեռագործներու վաճառման նկատմամբ, այսինքն այն ձեռագործներուն, որ փոքր Ասիոյ զանազան քաղաքներէն կրնան արտադրուիլ և բերուիլ մերձաւոր կամ հեռաւոր Եւրոպա և ծախվիլ յօգուտ հայերու: Սոյն վերջին միջոցներէն մին ալ գաղթական և սակայն ընդունակ և կարող հայերու գործ գտնել է Մեծն Բրիտանիոյ կամ իր գաղթականութեանց մէջ:

Տարակալ չը կայ թէ Հայաստանի ներկայ կացութեան մէջ ձեռագործներու եւրօպական հրապարակներու վրա ծախվելու և անտոյմ չափեր հանելու գաղափարը անհեթեթ է, քանի որ հայուն համար իր երկրին մէջ ապահովութիւն չը կայ: Մասնաւորաւ մը, որ հայերու գործ գտնելու խնամակալութիւնն ունի, վերջերս որոշած է Կիպրոս զրկել Եփրատիցին հայ բժշկական ազատ ուսանողներէն ալ. Կարապետ Աթանասեան, հոն գաղթական հայերու չեքամաբուծութիւն ուսուցանելու նպատակաւ նոր պատմէօրեան դրութեամբ, սակայն այս որոշումը դեռ ի գործ չէ դրուած:

Ժամանակ մը կար, երբ հայերու համար դրամ կը հաւաքուի, թէն քիչ, սակայն այդ այսօր հինգամ, մոռցված և կարեւորութեան զօրկ կը գտնուի. հայերու ապաստարանը իրեն դիմող հայերու օգնելու անկարողութեան մատուցելու վրա է: Այս երկրին մէջ հայերու գործ գտնելու համար թէն մասնաւորաւ մը կայ, սակայն իր գործունէութիւն յոյժ սահմանափակ մնացած է և գրեթէ անուանական: Քանի որ մեր դրածներ վերջին դէպքեր և պարագաներ միայն կը յօշուփեն, աւելորդ չէ յանդուր, թէ հայ երիտասարդներ թշուառութեան անստուգութեան

մատուցած Սմերիկայէ Անգլիա, Անգլիայէ Ֆրանսիա և Իտալիա կը տարուբերին և չեն դիտել իրենց տեղափոխութեան գաղափարը:

Այս դիտողութիւնը ըրած եմ բացատրելու համար թէ Թիւրքիայէ Եւրոպա խուժած հայ երիտասարդներու և գաղթականներու օգնելու գաղափարը համակրութեան վրա հիմնված է: Եթէ ինձ ներելի լինէր հոս նկարագրել մանրադէպներ, որոշ պիտի տեսնվէր, թէ հայ երիտասարդները չունեն որ և է միջոց այսօր անկախ լինելու անոնց համակրութեան: Ոչ միայն Անգլիոյ, այլ և եւրօպական մի քանի գործաւորական կենտրոններու մէջ, ուր մի քանի երիտասարդներ ցըրված են, հայեր վատ կը վարձատրվին: Հայ երիտասարդներ, որ կը գործեն անգլիական և կամ եւրօպական ինչ ինչ գործարաններու մէջ, կրնան ըսել թէ զրկված են այդ երկիրներու գործաւորական առանձնաշնորհութիւններէն: Սակայն դեռ պատշաճ է ըսել և կրնայ ըսուիլ, թէ այն երիտասարդներ, որ կը տարուբերին, թէն իրենց ընտանեաց օգտակար կը լինին և անկախ մօտաւորակաւ համակրութեան: Մեծ մարդասիրութիւնը այն պիտի լինի, երբ այս հեղափոխութիւնը այն պիտի լինի, երբ այս հեղափոխութիւնը իրենց ընտանեաց օգտակար կը լինին և չուարած էակներուն միջոցներ տրվին իրենց պիտի մնայ հայերու օգնելու աշխատողներուն մեծ թուականը տալու, քանզի չստան կան, որ կօգնեն հայերու, սակայն նախ իրենց անձերուն են որ կօգնեն:

Նոքա որ հետաքրքիր եղած են մեր թափառական երիտասարդներու կեանքին, պիտի տես-

Ջարմայր

մատ ուղարկվի, Զինովիեվի հետ մրցելու համար: Բայց արդէն ուշ էր: Զինովիեվ, կատարելով ինչ որ պէտք էր 7 տարվայ ընթացքում, 1883 թվին նշանակվեց ասիական ղեկավարումներով գլխաւոր, իսկ 1891 թվին՝ Շվեդիայի և Նորվեգիայի ղեկավար: Այդպիսի աջող և փառաւոր ղեկավարութեան ծառայութեան հորինել Զինովիեվ կարողացաւ շատ լաւ ուսումնասիրել Արեւելքը, արեւելեան հարցը, արեւելեան ժողովուրդները և այսօր, երբ արեւելեան հարցը այնքան սուր և տագնապալի բնաւորութիւն է ստացել, հասկանալի է, թէ միայն Զինովիեվի պէս փորձված ղեկավարող կարող էր բռնել և Պոլսի ուսաց ղեկավարի պատասխանատու և ծանր պաշտօնը:

Հայերի վերաբերմամբ, ինչպէս արդէն յայտնել ենք, Զինովիեվ, բաւական լաւ է տրամադրված: Կ. Պոլսի հայոց պատրիարքարանին է մնում խնամքով մշակել այդ տրամադրութիւնը և մենք յայտ ունենք, որ Զինովիեվ կաշխատի թեթեւեղութեամբ իր ժողովուրդի դժուր և դառն վիճակը, գործ դնելով իր հեղինակաւոր ազդեցութիւնը Բ. Գրան և թիւրքաց կառավարութեան վրա:

ՆԱԽԱԿ ԳՕՐՈՒ ԳԱՍԱՌԻՑ

Ախալքալաք գիւղ, յուլիսի 6-ին
Այս տարի Ախալքալաք ամառանոց եկողներ թիւը մեծ է: Վարձվել են բոլոր յարմար բնակարանները: Գիւղացիները, տեսնելով տարուց տարի եկողներ թիւի աւելանալը, մտածում են իրանց այգիների մօտ շինել նոր ամառանոցներ:

Հունձը այս տարի բաւական է. թէ ցորեն, գարի և սիմինդը և թէ մրգատու ծառեր առատ բերք են տուել: Փոքր ինչ անջաւարար է խաղողը, որ մնացած ցորենից և այգի թէև կաղաւթվել է, բայց առատ չէ ողկոյններով:

Ախալքալաքում աչքի է ընկնում դպրոցի նոր շէնութիւնը, որ գլուխ գալու վրա է: Շինութեան ծախքը և ամբողջ հոգը իր վրա է վերցրել այստեղի աւագ քահանայ տէր-Յովհաննէսը, որ մի քանի տարի առաջ նոյնպէս իր ծախքով շինեց այստեղի եկեղեցին: Սա կարծեմ հաղուադու դէպքերից մէկն է, որ զբաղւած մէջ, որ քահանան իր սեփական փողերով բարեգործութիւն անի իր կենդանութեան միջոցին: Գպրոցի շինութիւնը շատ ընդարձակ է, սենեակները ունեն մեծ բանակութեամբ ուղ և լոյս:

—

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Զորքալաքի, ամսիս 9-ին, թիֆլիսի վոզնեսենսկայա եկեղեցու բակում կատարվեց «НОВОЕ ОБОЗРѢНІЕ» լրագրի հիմնադիր Ալեքսանդր Ստեպանովի հոգեհանգիստը հանգուցեալի գերեզմանի վրա: Հոգեհանգիստին ժողովվել էին թիֆլիսի ուսուցիչ և հայ լրագրիչների ներկայացուցիչները, թիֆլիսի քաղաքագլուխը, հանգուցեալի ծանօթները և յարգողները: Հոգեհանգիստը ըսկվեց 12 1/2 ժամին: Հոգեհանգիստ կատարող քահանան մի կարճ ճառի մէջ խօսեց Ստեպանովի արժանաւորութիւնների մասին:

Թիֆլիսի ոստիկանութեան աջովեց այս օրերս կեղծ հինգ բուրժուանոց և տասն բուրժուանոց թղթագրամներ շինելու մի ամբողջ գործարան գտնել: Այդ գործարանը զետեղված էր միլիցիայում ծառայող ուսն Զէնալովի տանը, որը արդէն մի քանի անգամ պատասխանատուութեան է ենթարկվել կեղծ թղթագրամներ տարածելու համար, բայց ապացոյցներ չը լինելու պատճառով արձակվել է: Դեռ այս տարվայ սկզբին, թիֆլիսի ոստիկանութիւնը տեղեկութիւն ստացաւ Երևանից, որ Երևանի նահանգում երեւցել են 5 բուրժուանոց կեղծ թղթագրամներ և հիմք կայ ենթադրելու, որ այդ կեղծ թղթագրամները շինվում են թիֆլիսում: Ոստիկանութեան կատարած խուզարկութիւնները ցոյց տուին, որ այդ բանի մէջ յանցաւորը մի թուրք բէկ է, Զէնալովի անունով: Յուլիսի 5-ին, դատաստանական ընտրիչ Մոսկալով և սլովրիստով Գլեբով յանկարծ խուզարկութիւն անելով Զէնալովի տան մէջ, կարողացան գտնել պատերի մէջ թաղցրած կեղծ թղթագրամ չինելու բոլոր մեքենաները և պարագաները, ինչ-

պէս և արդէն պատրաստված մեծ բանակութեամբ կեղծ թղթագրամներ: Զէնալով իր երեք եղբայրների հետ ձերբակալվելով, ուղարկվեց Մեծխի բանտը:

Թիֆլիսում ներկայումս տարածված է տաւարի ժանտախտ հիւանդութիւնը: Կովեր և եղներ, որ ամենից շատ վնասվում են այդ ցաւից, կարող են ազատ մնալ հիւանդութիւնից, եթէ առանձնացվեն հիւանդ կենդանիներից: Սակայն առանձնացման գործը դեռ չէ կազմակերպված բաւարար կերպով:

«С. Петерб. Вѣдомости» լրագրի յուլիսի 3-ի համարում տպված է մի առաջնորդող յօդուած «Անդրկովկասի կարիքները» վերնագրով, որի մէջ հեղինակը ապացուցանում է փաստերով այն միտքը, թէ երեք գլխաւոր գործօններ սաստիկ վնասում են երկրի անտեսական դարգացման և հեղուկեմէ փորում են նոր բարեկեցութեան հիմքը. այդ գործօններն են հողի սաստակաւորութիւնը, ձանապարհների բացակայութիւնը և վաշխառութիւնը, որոնց առաջը ելն է շուտով չառնվի, մեր երբեմն հարուստ, ծաղկած և պաշարներ երկիրը կատարեալ աղքատութեան կը հասնի: Գիւղացիները սաստիկ նեղվում են հողի պակասութիւնից, դիւղատեսակական արդիւնքները և բերքերը չեն կարողանում վաճառահանով: Ձանապարհներ չը լինելու պատճառով, իսկ հրէշաւոր վաշխառութիւնը, չը նայելով նոյն իսկ խիստ, բայց աննպատակաւորմար օրէնքների գործադրութեան, կատարելապէս կործանում է գիւղական ազգաբնակչութեան անտեսութեան հիմքը: Առաջին չարքի առաջն առնելու համար կատարութիւնը արդէն մշակել է մի օրինադիւ, որն այժմ ընդունվում է Կովկասի կառավարչապետի խորհրդում, իսկ ձանապարհների բացակայութեան և վաշխառութեան դէմ, իբրև արմատական միջոց, հեղինակը առաջարկում է գիւղական բանկի հիմնադրութիւնը:

Բացի կեղծ թղթագրամներից, թիֆլիսում ըսկել են երեւալ և բրձնից շինած կեղծ ոսկեոսաններ:

Կովկասում մի բարձր տէխնիկական ուսումնարան հիմնելու հարցը վաղուց յարուցված և արդէն ընդունվում է կառավարչական ատենաներում: Այժմ, ինչպէս հաղորդում է «НОВОЕ ОБОЗРѢНІЕ» լրագիրը, Կովկասի ուսումնարանական շրջանի հոգաբարձու Եանովսկի, որի կարծիքը հարցրել էր ժողովրդական լուստարութեան մի-նիստութիւնը, յայտնել է, որ ամենից աւելի նպատակաւորմար տեղը վաշխիկալկազ քաղաքն է:

Սօչիի շրջակայքում չուտով պէտք է սկսվի հոտաւէս իւղերի և ջրերի համար պիտանի բույսերի մշակութիւնը: Մի քանի մասնագէտներ արդէն յայտնել են ցանկութիւն սկսելու. գործը և այժմ ընդունված են յարմար հող գտնելու խնդրով:

Յուլիսի 5-ից թիֆլիսում անտանելի չորեք են սկսվել:

Շամախու ՄԱԳԻՍԱՍ, գիւղից, որ յայտնի է իր գինիներով, հաղորդում են, որ խաղողի վազերի վրա երեւցել է մի օտարօտի հիւանդութիւն բուրժուանոց տարբեր միջակայքում: Մի քանի հիւանդութիւններ կարծես կարծում են, որ այդ հիւանդութիւնը տեսի կողմից ուղարկվում է Մաղաաս մասնազգէտ իշխան Անդրօնիով, վերջնականապէս պարզելու հիւանդութեան բնաւորութիւնը:

ԱՌԱՂՔԱՂԱՎԻՑ մեզ գրում են. «Յունիս ամսի սկզբներից մինչև օրս, բացի մի քանի գիւղերից, անձրև չէ եկած մեր գաւառում: Մի երկու անգամ փոքրիկ անձրևներ կ'ան գաւառի հիւսիսային և հարաւային մասերում. չորութիւնից աւելի շատ վնասվել են յետիւ՜ ցանքները և խոտը: Այս տարի խոտը և դարմանը մեր գաւառում սակաւ է. ցորենի և գարու բերքը միջակ—բաւարար է. այսպէս, օրինակ՝ եթէ առատ տարիներին դեռեալներն ստացվում էր 5—6 սալ բերք—մօտաւորապէս 12 սօմար գարի, այս տարի սպասվում է 3—4 սալ բերք—մօտաւոր-

ապէս 7—8 սօմար գարի. այսպէս է և ցորենի բերքը: Եթէ չորութիւնը մի քանի օր ևս չաւանակվի, վնասը աւելի ևս զգալի կը լինի մանաւանդ դարմանի վերաբերմամբ: Կարկուտից զգալի վնասներ չեն պատահել մեր գաւառում: Յունիսի սօմարը առ այժմ ծախվում է 12—14 բուրժով, գարու սօմարը 7—8 բուրժով: Մրգեղէնը մեր գաւառում առատ է»:

ԱՌԱՂՔԱՂԱՎԻՑ մեզ գրում են. «Մշակիչ» մէջ տպված թղթակցութիւնից յայտնի է արդէն, թէ ինչ անկարգութիւններ են տիրում այստեղի պօստային յարաբերութիւնների մէջ: Աշխարհի ամեն կողմում ընդունված է, որ երբ մի անկարգութեան մասին գրվում կամ յայտնվում է ուր որ հարկն է, դա միմիայն այդ անկարգութեան կրկնվելը արդեւելու համար է: Բայց մեր կողմում այս մասին, ինչպէս երեւում է, բոլորովին ուրիշ կերպ են մտածում: Նրանք, որոնցից կախված էր այդ անկարգութիւնների վերացնելը, ուղեցին պատժել զանապառնիւն: Նրանք նախ դադարեցրին Արդանուչի վաճառականներին ցրվել նրանց ստացած նամակները, պահանջելով, որ իրանք, այդ վաճառականները և առհասարակ ժողովուրդը մարդաբնական ոգով իմանան թէ իրանց հաղցէին նամակ կամ լրագիր կայ և զան տանեն. յետոյ, այս միջոցն էլ բաւարար Արդանուչի պօստատան հետ, յայտնելով, որ ով ուղում է Արդանուչից դուրս գտնված աշխարհի հետ նամակագրութիւն պահպանել, թող ինքն իր գլխի ճարը տեսնի և թէ Արդանուչի պօստատանը և տեղական ոստիկանական վարչութիւնը չեն կարող ուրիշ չնքերի ծառայել: Այս ուրիշներ կարող են, բը-նականաբար, տեղական ծառայողները և նրանց գերդաստանները, որոնք շարունակում են կանոնաւոր յարաբերութիւն պահպանել պօստատան հետ: Եւ ահա այս կերպով, Արդանուչի թուով 3 1/2 հատ չինօֆիկները՝ իրանց ծառայական և անձնակաւ գործերի համար իրաւունք ունեն օգտվել և իրանց լրագրիւններ ու նամակները ստանալ իրանց նստած տեղը, իսկ վաճառականները և ժողովուրդի մնացած մասը՝ ստիպված են սրանից յետոյ կամ անձամբ գնալ 40 վերստ տեղ, Արդանուչի պօստատանը և կամ ամեն յարաբերութիւն դադարեցնել արտաքին աշխարհի հետ: Միայն չէ սա արդեալ: Միթէ այդքան զը-ժուր բան է պօստային բաժանմունքը հաստատել Արդանուչի նման մի առևտրաչափ գիւղաքաղաքի և նրան շրջապատող բազմաթիւ գիւղերի համար, մանաւանդ երբ այնտեղ արդէն հեռագրատուն կայ վաղուց, և պօստային կանոնաւոր յարաբերութիւնների պահանջը հեռգհեռե աւելանում է գաւառի առևտրի և արդիւնաբերութեան անընդհատ դարգացման հորինել: Դրանով միանգամայն վերջ կարելի էր տալ զանազան տեղական պօստի ցրվելու և երկ կամայականութիւններին, որոնք այժման չինի կարևորութիւն են տալիս ժողովրդի այս անհրաժեշտ պահանջին»:

ՇՈՒՇԻ գաւառի վարադաւոյն գիւղից մեզ գրում են. «Այսօր, յուլիսի 5-ին, ուրբաթ երեկոյան ժամի 12-ին, մի սարսափելի դէպք պատահեց այստեղ: Գիւղացիները իրանց սովորութեան համեմատ խորձը կրում են կալը: Խորձը կալը բերելուց գիւղացիներից մէկը տեսնում է երեք թուրք աւազակներ 6 ձիու հետ, որոնցից 3 զոդացված էր: Չարագործները յարձակվում են գիւղացիների վրա: Գիւղացիները մէկը՝ Դանիել Միքայէլեան, անվախ և յաղթանակով մի մարդ, տեսնելով այդ վերցնում է իր հետ երիտասարդներից մէկին՝ Համբարձում Արդանուչեանցին, և զինադրում է աւազակներին: Հրացանների ձայնի վրա թափվում են միւս գիւղացիները, որոնց օգնութեամբ բռնում են աւազակներին իրանց ձիւներով, և իսկույն կապտուում նրանց: Գիւղում կանկալվում են գիւղացիների վրա: Գիւղացիները կին, աղայ, աղիկ, բոլոր լալով վազում են կալերը, իւրաքանչիւրը որոնելու իր բարեկամին, մայրը որդուն, քոյրը՝ եղբորը, և այլն: Տեսնելով կապտուած աւազակներին՝ սկսեցին ձեռնել նրանց և տարան գիւղը: Գիւղիցվայ ժամը 4-ին գիւղի տանտէրի խորհրդով մի քանի

մարդկանցով աւազակներին տարան խանքենդի, ընտիրի մօտ: Քննիչը ուղարկեց աւազակներին, Շուշու բանտը»:

ՋԱՂԱՂԱՂԻՑ մեզ գրում են. «Ամսիս 29-ին, կիրակի, սիրողներ մի խումբ ներկայացրեց զաղթականների օգտին «Բանաստեղծ», «Սուտ ձգնաւոր» և «Երկու հարիւր հազար» վոզելիւները: Չը նայելով, որ ներկայացման տեղը բաւական անյարմարութիւններ ունէր և պիեսաներն էլ ընտրվել չէին, այնու ամենայնիւ, պէտք է տեսնել, որ ժողովուրդը սիրով կատարեց իր պարտը, աչքի առաջ ունենալով ներկայացման նպատակը: Մինչև անգամ տեղացիներից շատերը ասում են, որ այսպիսի վերաբերութիւն մեր հասարակութեան կողմից շատ քիչ է տեսնված: Հասարակութիւնը շատ զոհ Դուրս գնաց և մինչև անգամ շատերը ցանկութիւն են յայտնում կրկին ներկայացում տեսնել նոյն նպատակով: Բայց միայն լուրջ պիեսաներ լինեն: Զուտ արդեալ մնաց 47 ր. 30 կօպէկ»:

ՍԱՎԻՍԱՎԻՑ մեզ գրում են. «Երկու օր առաջ հանգիսի ցրերի պարկի Կուրդալ կոչվող դահլիճում, բժշկապետ Պիասկով, տեղիս քաւոր հիւանդների օգտին, կարգաց մի երկար դասախօսութիւն Կնիւշ դերձ: Դահլիճը լի էր ունկնդիրներով: Յարգելի դասախօսը փայլուն կերպով ներկայացրեց կնիւշ նշանակութիւնը, թեյ մի առ մի նրա պարտաւորութիւնները ու հարկաւոր պակասութիւնները, յայտնեց մօտիկ ապագայում վերացված տեսնել այդ պակասութիւնները: Որքան ցանկալի կը լինէր լսել այս տեսակ դասախօսութիւններ և մեր Անդրկովկասի գաւառներում, որտեղ ժողովուրդը դարերի նախապաշարմունքների ազդեցութեան տակ նայում է կնիւշ վրա, ինչպէս մի աղբիւրի վրա, որից բղկում են բոլոր չարութիւնները»:

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՎԵՐՁԻՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ

Վերջին օրերս Լոնդոնում հրատարակվել է հայր Շարմանի մի գրութեան անգլիերէն թարգմանութիւնը՝ «Dying Armenia and Christian Europe» (Մահող Հայաստան և քրիստոնեայ Եւրոպա) վերնագրով: Հեղինակն այդպեղ աշխատում է ցոյց տալ, որ մինչև այժմ եղած խնդրի կոտորածների քաղաքականութիւնը Հայաստանում տեղի է տուել, մանաւանդ աւելի հեռաւոր գաւառներում, ծածուկ և սիւսէմատիական ոչնչացմանը:

«Standard» լրագրին հաղորդում են Կ. Պոլսից.

«Վանի նախկին վայրի սուլթանին ուղարկած իր զեկուցագրի մէջ պահանջում է բոլոր պաշտօնեաների արձակումը և մի քանի նշանաւոր անձանց աքսորումը, եթէ կամենում են նոր խռովութիւնների առաջն առնել, խռովութիւններ, որոնց առաջ, նրա խօսքերով, Թաթարի կոտորածը երեւոյալական զուարճալիք պէտք է համարվի»:

ՊԵՏՈՒԹԻՒՆՆԵՐԸ ԵՒ Բ. ԳՈՒՐԸ

Արտասահմանեան լրագիրները ընդհանրապէս այն կարծիքն են յայտնում, որ Բ. Գուրը էլի մի փոքր ժամանակ կը շարունակի իր ձգձգութեան լրագրականութիւնը: Այժմ, ինչպէս յայտնի է, իլդիգ-Քիօսկից սիստեմատիական կերպով լուրեր են տարածվում, թէ Արդու-Համիդը անձամբ կամենում է հնազանդվել Եւրոպայի կամքին, բայց նա չէ համարձակում այդպիսի վարվել ի նկատի ունենալով զօրքի, ժողովրդի և ամբողջ մասնետական աշխարհի մէջ տիրող արամադրութիւնը: Բացի դրանից թիւրքաց կառավարութիւնը մասնացոյց է անում այն հանգամանքի վրա, թէ անպայման անհրաժեշտ է թեսալիան թողնել թիւրքերի ձեռքը և զոյքը ապահովելու համար: «Standard» լրագրին հետադարձում են, որ թեսալիայի բնակիչները խնդրաբեր են ուղարկում դեսպանատունը, աղերսելով թողնել երկիրը փաղէշաֆ գայիստին տակ, ապա թէ ոչ թիւրքաց զօրքերը: Նախ քան երկրից հեռանալը, կրակի և սրի ճա-

Типографія Канцел. Главннач. Гражданск. частью на Кавказѣ, Лорисъ-Меликовская ул., д. каз.